

16505

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՄԱՐՏ 20, 1932

ՊՈՍԹՈՆ

361
Հ-20

ԿԱՆՈՆԱԳՐԷՆ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵԻՈՐ

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Նպա-
տակն է Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ մը հիմնել:

1.- Տուներ շինելով յարմար հողի մը վրայ, եւ
հոն տեղաւորել մասնաւորապէս Խարբերդ Գաւառի
Հայեր:

2.- Ճարտարարուեստներու հաստատումով ա-
նոնց գործ ստեղծել:

Միութեան կրնան անդամակցել Խարբերդ Գա-
ւառի Հայեր՝ միմեկին 1 տոլար մուտք եւ 2 տո-
լար տարեմիճար:

Մասնաճիւղեր կրնան կազմուել Հայ գաղութնե-
րու մէջ՝ պայմանաւ որ անդամներու թիւը առ
նուազն 5 ըլլայ:

Դրամական գործառնութեանց պատասխանատու
է Կեդրոնական Գործադիր Մարմինը հաւաքարար:

Գանձապահը 2000 տոլար երաշխաւորութեան
տակ է իր պաշտօնէութեան ամբողջ շրջանին:

Ուսումնասիրաց Ընկերութիւններէ ստացուած
գումարները անձեռնմխելի են եւ պիտի գործածուին
Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴը շինելու համար
միայն: Իսկ Միութեան տեղական ծախքերը պիտի
հոգացուին Միութեան ջանքերովը գոյացած ուրիշ
գրամներէ:

Որքան ատեն երեք մասնաճիւղեր գոյութիւն ու-
նենան, Միութիւնը իր գործը կը շարունակէ, հա-
կառակ պարագային Միութիւնը կը լուծուի եւ գըտ-
նուած բոլոր գոյքերն ու գրամները կը յանձնուին
Հայաստանի օրուան կառավարութեան գործածուե-
լու Միութեան նպատակին համար:

Ա.

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գումարեալ

Ի ՊՈՍԹՈՆ, ՄԱՐՏ 20, 1932, ԿԻՐԱԿԻ

ԿԵՍՕՐԷ ՎԵՐՁ ԺԱՄԸ 2-ԻՆ

Համա-Խարբերդցիական Միութեան Հինգերորդ Պատգա-
մաւորական Ժողովը տեղի ունեցաւ Մարտ 20, 1932, Կիրակի,
56 Հէնովքը սթրիթ, Պոսթոն, Էմէրիքըն Հաուզի մէջ:

Պատգամաւորներու ցանկը հետեւեալն էր.-

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԿՈՂՄԷՆ՝

- 1.- Տօֆ. Յովհ. Ծովիկեան
- 2.- Յարութիւն Խօլիկեան
- 3.- Մարտիրոս Տէր Յովհաննէսեան

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԷՆ՝

- 4.- Յովսէփ Գրիգորեան
- 5.- Յարութիւն Սողիկեան
- 6.- Սողոմոն Մալեմէգեան

ՈՒՍՏԸՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԷՆ՝

- 7.- Մաղաֆ Պէրպէրեան
- 8.- Կիրակոս Փաշայեան

ԼԻՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԷՆ՝

- 9.- Յարութիւն Գ. Յարութիւնեան

ՖՐԷՋՆՕՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԷՆ՝

- 10.- Ստեփան Տիննեան
Սարգիս Կօշկարեան (խորհրդական)

ԼՕՁ ԷՆՃԷԼԸՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԷՆ՝

- 11.- Յովհաննէս Նաիկեան
- 12.- Յովհաննէս Սողիկեան

ԽԱՐԲԵՐԴԻ ԿՐԹԱՍԻՐԱՅԷՆ — ՓՐԱՎԻՏԷՆՍ

- 13.- Յարութիւն Սամուրեան
- 14.- Յարութիւն Խօրուսեան

ՀԻԻՍԷՅՆԻԿԻ ՎԵՐԱՇԻՆԱՅԷՆ՝

- 15.- Ղազար Սրապեան
Մելքոն Ռատիկեան (բացակայ)

ՔԵՍԻՐԻԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵՆԷՆ՝

- 16.- Մինաս Գաբրիէլեան
- 17.- Յովհաննէս Պարոնեան

ՀՈՂԷԻ ՄԻԱՅՆԵԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ՝

- 18.- Ասատուր ձգնաւորեան
- 19.- Դաւիթ Մուշեղեան

2002
62712 ախ
1450-85

ԻԶՄԷՆԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՆ՝

20.- Յարէթ Մ. Փիլիպպոսեան

21.- Ղազար Պոյաճեան

Ներկայ էին Բաղմաշէնի Ուսումնասիրաց Ընկերութեան անդամներէն Սարգիս Հեքիմեան եւ Ապտալ Պօղոսեան, ինչպէս նաեւ ուրիշ հետաքրքիր Խարբերողներ: Իսկ Կեդրոնական Գործադիր Մարմինը իր ամբողջ կազմով ներկայ էր, ի բաց առեալ գանձապետը որ հիւանդութեան պատճառաւ կըրցած էր ներկայ ըլլալ:

Ժողովի Օրակարգն էր. —

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

- 1.- Յանձնարարականներու վաւերացում:
- 2.- Օրուան դիւանի ընտրութիւն:
- 3.- Նախորդ Պատգամաւորական Ժողովի արձանագրութեան ընթերցում:
- 4.- Կեդրոնական Գործադիր Մարմինի Տարեկան Տեղեկագիրը:
- 5.- Գանձապահին հաշիւը:
- 6.- Յանձնախումբերու ընտրութիւն. — Հաշուեքննիչ, Հարցեր Դասաւորող եւ Ընտրական:

ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

- 7.- Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում եւ վաւերացում:
- 8.- Մասնաճիւղերու տարեկան տեղեկագիրները:
- 9.- Մասնաճիւղերէ եկած հարցեր:
- 10.- Հայաստանի ներկայացուցիչներու պատրաստած ծրագիրը 1932-33 տարեշրջանի գործունէութեան, եւ անոր համապատասխան Ամերիկայի Երջանի գործունէութեան ծրագրի պատրաստութիւն:
- 11.- Ընտրութիւն Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամներու:

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

1.- ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱԽԵՐԱՑՈՒՄ

Միութեան ատենապետը, Տօք. Յ. Ծովիկեան, իր պաշտօնին բերմամբ՝ Ժողովի սկզբնաւորութեան բացակայ ըլլալով, փոխատենապետը, Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, ժողովը բացաւ մի քանի հակիրճ բառերով: Ասուելով որ ներկաներ մեծամասնութիւն կը կազմէին՝ անցաւ օրակարգի հարցերուն:

Պատգամաւորներու յանձնարարականները քննուելէ վերջ վաւերացուեցաւ: Ուստրիի պատգամաւորներէն Կիրակոս Փա-

շոյիան բացակայ ըլլալով անոր փոխանորդ ընտրուեցաւ Տիգրան Էփէքեան: Այսպէս Ժողովը կը բաղկանար 21 քուէատու անձերէ:

2.- ՕՐՈՒԱՆ ԴԻՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ձեռնարած քուէով Մաղաք Պէրպէրեան ընտրուեցաւ ատենապետ եւ Միհրան Կօչկարեան ատենադպիր:

Սակայն նկատելով որ Միհրան Կօչկարեան իբրեւ խորհրդական պիտի չկրնար այդ պաշտօնը ստանձնել, Ֆրէդնոյի պատգամաւորը, Ստեփան Տինճեան, իր ձայնը անոր փոխանցեց, այսպիսով Միհրան Կօչկարեան օրինաւորապէս ընդունուեցաւ իբրեւ ատենադպիր:

Մաղաք Պէրպէրեան մի քանի հակիրճ բառերով իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն ցոյց տրուած պատիւին եւ վստահութեան համար եւ անմիջապէս անցաւ օրակարգի խնդիրներուն:

3.- ՆԱԽՈՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Նախորդ Պատգամաւորական Ժողովի արձանագրութիւնը կարդացուեցաւ առ ի դիտութիւն:

Այս Ժողովին մէջ տրուած էին հետեւեալ որոշումները:

- 1.- Կազմել Երկատարաց եւ Կանանց Օժանդակ Մասնաճիւղեր: Մասամբ գործադրուած:
- 2.- Ծախքերու պիւտճէի կրճատում: 1040 տոլարի կրճատում մը իրագործուած:
- 3.- Խարբերողներու մարդահամարի պատրաստութիւն. — Ներկայիս անգործադրելի հիմնարկած:

4.- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ընդհանուր Քարտուղարը վարդաց խնամով պատրաստուած Միութեան տարեկան տեղեկագիրը (Տեա էջ 10) — Այլեւայլ դիտողութիւններէ եւ բացատրութիւններէ վերջ՝ տեղեկագրի զնահատումը թողուեցաւ յաջորդ նիստին:

5.- ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

Միութեան գանձապահը, Սարգիս Կօչկարեան, բացակայ էր հիւանդութեան պատճառաւ, սակայն 1931-1932 չրջանի հաշուեցուցակը որ կանխապէս պատրաստուած էր ցրուեցաւ ներկաներուն: Հաշուեքննիչ Յանձնախումբի քննութեանէն եւ վաւերացումէն յետոյ պատգամաւորներ պատրաստ պիտի ըլլային իրենց դիտողութիւնները ընելու:

**ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒՆ
1931-1932 ՇՐՋԱՆԻ**

ՄՈՒՏՔ		ԵԼՔ	
Նախորդ չբջնէն մնացած	373-98	Հայաստան զրկուած	2774-34
Թվատիմցիի գրքերէն	66-00	Քարտուղարութեան	835-00
Այլեւայլ գանձումներ		Ղուկաս Արոյեանի	20-00
Պոսթոն	1461-79	Ճանապարհածախս	158-50
Փրովիտէնս	729-98	Ծանուցումներ	89-43
Ուստըր	242-39	Պատգմ. Ժողովի	18-00
Լին	218-75	Մաղկեպատկներ	10-00
Լօղ էնճէլըս	202-50	Տպագրութիւն	46-25
Շիբաիօ	140-00	Փօսթի ծախք	19-41
Տիթրոյթ	101-00	Սրահի վարձք	13-00
Հարթֆըրտ	71-50	Պէնքի ծառայութեան	4-00
Փրէզնօ	50-00	Գանձապահի պօստ	5-00
Հէյլըրհիլ	25-00	Փոխառութեան տոկոս	7-50
Նիւ Եօրք	8-50	Այլեւայլք	10-47
Տոկոս	1-18		
Մեծկերտի Ընկերութեան	600-00	Գումար	4010-90
Խուլագիւղի Գրդ. Միութ.	346-48	Կշիռ*)	628-15
Համագումար	4639-05		4639-05

Սարգիս Կօճկարեան, գանձապահ:
Մարտ 16, 1932

(*) Սոյն գումարին \$440-22-ը կը մնայ Զարսքաուն Թրքս-Քըմքընիի
էնդ, իսկ մնացած \$187-93-ը կանխիկ:

6.- ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Աթոռին իրաւունք տրուեցաւ նշանակելու յանձնախումբ-
բեր, որք էին հետեւեալները.—

Հաշուեմնիչ Յանձնախումբ՝

Յովսէփ Գրիգորեան

Յարութիւն Սամուրեան

Մինաս Գարրիէլեան

Հարցեր Դասաւորող Յանձնախումբ՝

Մարտիրոս Տէր Յովհաննէսեան

Յարութիւն Գ. Յարութիւնեան

Դաւիթ Մուշեղեան

Ընտրական Յանձնախումբ՝

Հաղար Սրապեան

Յարութիւն Սողիկեան

Յարութիւն Խօրուխեան

Պիտմէի Յանձնախումբ՝

Տօք. Յ. Մովսիսեան

Հաղար Պօյաճեան

Սողոմոն Մալեմէղեան

Առաջին նիստը լրանալէ առաջ առաջարկուեցաւ որ մաս-
նաճիւղերու տեղեկագիրները կարգացունին եւ կամ բերանացի
տրուին եւ նոյնպէս պատեհութիւն տրուի ներկայ եղող ուսում-
նասիրաց ընկերութիւններու ներկայացուցիչներուն եւ ան-
դամներուն յայտնելու իրենց տպաւորութիւնները եւ տեսա-
կէտները:

7.- ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԸ

Երեք մասնաճիւղեր զրկած էին գրաւոր տեղեկագիրներ
— Ֆրէշնօ, Լօղ էնճէլըս եւ Պոսթոն:

ՖրէշնօՅի Մասնաճիւղը ցաւ կը յայտնէր՝ որ տնտեսական
տագնապին պատճառաւ կարող եղած էր մեծ գործ մը կատա-
րել: Սակայն կը խոստանային որ իրենց լաւագոյնը պիտի
ընէին որթատունկերու առաքումին համար եւ զրկած էին 50
տոլարի չէք մը:

Լօղ էնճէլըՍի Մասնաճիւղը իր սովորական կարգապա-
հութեամբը եւ ճշգրիտ հաշիւներովը դարձեալ պատուոյ ա-
ռաջին աթոռը կը գրաւէր: Ըրած էր մի քանի ընդհանրական
ձեռնարկներ եւ տարուան ընթացքին զրկած էր \$202-50:

Պոսթոնի Մասնաճիւղը ամենաբարձր հասոյթը ապահո-
ված էր Միութեան համար՝ իր տարեկան դաշտահանութեամբը,
Ուոլինկթընի ծննդեան օրուան հանդէսովը եւ փոխան ծաղիկե-
պապկներու ստացած նուէրներովը: Համագումար՝ \$1461-79:

Իսկ բերանացի տեղեկութիւններ տուաւ Լինի Մասնա-
ճիւղի կողմէն Յարութիւն Գ. Յարութիւնեան: Ապահոված
էին \$218-75:

Ուոսկըի Մասնաճիւղին կողմէն խօսեցաւ Մաղաք Պէր-
պէրեան: Ուստըրը զրկած էր կեդրոն \$242-39:

ՓրովիտէնՍի Խառն Յանձնախումբի կողմէն խօսեցաւ
Կարապետ Հաղարոսեան: Իրենց դաշտահանութեամբը եղած էր մեծ
յաջողութիւն մը: Զուտ հասոյթ՝ \$535-63:

8.- ՔԱԶԱԼԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑՆԵՐ

Ընկերութիւններու ներկայացուցիչները եւ անդամները
ըրին մի քանի խիստ քաջալերական ղեկոյցներ:

Բաղմաչէնի Ուսումնասիրացի անդամներէն իբրեւ հիւր
ներկայ էին Սարգիս Հէքթեան եւ Ապտալ Պօղոսեան:

Միութեան հանդէպ իրենց վատահոլութիւնը եւ յարգանքը
յայտնելէ վերջ յայտարարեցին որ Բաղմաչէնի Ուսումնասի-
րացը բնաւ անտարբեր եղած էր շինարարական այս մեծ ձեռ-
նարկին հանդէպ, միայն պատեհ առիթին կը սպասէր առնելու
գործնական քայլ մը: Անոնք վստահ էին որ իրենց ընկերու-
թիւնը յառաջիկայ պատգամաւորական Ժողովին մէջ պիտի
քուէարկէր կարեւոր դումար մը Նոր Խառքերդի շինութեան
համար:

Փրավիտենսէն խարբերդի Կրթասիրացի ներկայացուցիչը Յ. Սամուրեան յայտարարեց որ իրենք քուէարկած էին դարձեալ նուիրել \$1200 Նոր խարբերդի շինութեան համար, որով խարբերդի Կրթասիրացիները ցարդ նուիրած դամարը կը հասնէր \$11,486.89-ի: Այս ընկերութիւնը որ Նոր խարբերդի շինութեան նախաձեռնողը եղած էր, իր տարեկան եկամուտին կէսը ամէն տարի նուիրած էր եւ պիտի նուիրէր՝ երկու տարի առաջ անցած որոշումի մը համաձայն:

Հիւսէյնիկի Վերաշինացին, Բեսիրիկի Ընդհանուր Միութեան, Հողէի Միացեալ Ուսումնասիրացին եւ Իջմէի Միացեալ Ընկերութեան ներկայացուցիչները յուսալից արտայայտութիւններ արին: Ամէն ալ վստահ էին որ յետ այսու պարբերաբար պիտի օժանդակէին Նոր խարբերդի շինութեան, ինչպէս օժանդակած էին անցեալի մէջ:

Հողէի Միացեալ Ուսումնասիրացի ներկայացուցիչները, Ասատուր Ճգնաւորեան եւ Դաւիթ Մուշեղեան, վստահ էին որ իրենց խոստացած 1200 տոլարի նուէրը ի մօտոյ պիտի զրկուէր Միութեանս դանձապահին:

Այս քաջալերական զեկոյցներէն վերջ Առաջին նիստը փակուեցաւ ժամը 5.30-ին:

ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

Երկրորդ նիստը բացուեցաւ ժամը 6.30-ին: Բոլոր անդամները ներկայ էին:

Այս նիստին օրակարգն էր յաւելեալ հարցերով միասին հետեւեալը, զոր Հարցեր Դասաւորող Յանձնախումբը ներկայացուց:

1.— Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում եւ վաւերացում:

2.— Մասնաճիւղերէ եկած հարցեր

ա.— Կեդրոնական Գործադիր Մարմինը Պատգամաւորական Ժողովներու մէջ ունենայ 3 ձայն փոխան 1-ի:

բ.— Համա-խարբերդցիական Միութեան դիրքը հանդէպ ներգաղթի հարցին:

գ.— Ընտրել յանձնախումբ մը Կեդրոնական Գործադիր Մարմինի կողմէն որ դիմում կատարէ ուսումնասիրացներու եւ վերաշինացներու դրամական օգնութեան համար:

դ.— Հանդուցեալ Մկրտիչ Հաճի Յովհաննէսեանի կրտսէի հարցը: Ի՞նչ դիրք թռնելու է Միութիւնս հանդէպ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

3.— Հայաստանի ներկայացուցիչներու ղրկած ծրագիրը 1932-1933 չըջանի գործունէութեան եւ անոր համապատասխան Ամերիկայի Շրջանի գործունէութեան ծրագրի պատրաստութիւն:

4.— Տարեկան տեղեկագրի եւ հաշուեցուցակի վերանկատում եւ վաւերացում:

5.— Ընտրութիւն Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամներու:

6.— Գնահատում եւ շնորհակալութիւն:

1.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՒ ՎԱԽԵՐԱՑՈՒՄ
Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով վաւերացուեցաւ:

2.— ՄԱՍՆԱՃԻՂԵՐԷ ԵԿԱԾ ՀԱՐՑԵՐ

Ա.— Կեդրոնական Գործադիր Մարմինը Պատգամաւորական Ժողովներու մէջ ունենայ 3 ձայն փոխան 1-ի:

Այս հարցին մասին թեր ու դէմ կարծիքներ յայտնուելէ վերջ՝ 4-ի դէմ 10 քուէով որոշուեցաւ ընդունիլ ներկայ պատգամաւորական Ժողովին մասնակցելու համար երեք քուէատու անդամներ Կեդրոնական Գործադիր Մարմինէն, պայմանաւ որ անոնք ձեռնպահ պիտի մնային երբ խնդիրը կը դառնար կեդրոնի շուրջ:

Բ.— Համա-խարբերդցիական Միութեան դիրքը հանդէպ ներգաղթի հարցին:

Հետեւեալ որոշումը տրուեցաւ այս հարցին նկատմամբ.— «Համա-խարբերդցիական Միութեան 5-րդ Պատգամաւորական Ժողովը խաղաղապետութեամբ կ'ողջունէ Ս. Հայաստանի կառավարութեան կողմէն ձեռնարկուած ներգաղթի շարժումը եւ կ'որոշէ իր մասնաճիւղերուն միջոցաւ բարոյական ամէն աջակցութիւն տալ սկսուած շարժումին լիակատար յաջողութեան համար»:

Այս որոշումը դիւանին միջոցաւ պիտի հաղորդուի Ներգաղթի Ամերիկայի Կեդրոնական Յանձնախումբին:

Գ.— Ընտրել Յանձնախումբ մը Կեդրոնական Գործադիր Մարմինի կողմէն որ դիմում կատարէ ուսումնասիրացներու եւ վերաշինացներու՝ դրամական օգնութեան համար:

Այս հարցը խիստ այժմէական եւ կարեւոր նկատուելով որոշուեցաւ անոր գործադրութիւնը յանձնել Կեդրոնական Գործադիր Մարմինին:

Դ.— Հանգուցեալ Մկրտիչ Հաճի Յովհաննէսեանի կտակի հարցը: Ի՞նչ դիրք թռնելու է Միութիւնս հանդէպ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Այս հարցի մասին շատ լուրջ դիտողութիւններ եղան, իմանալով որ երեք տարիներու բանակցութիւնները տակաւին դործնական ելքի մը յանգած չէին:

Հետեւեալ բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ.—

«Նկատելով որ Նոր Խարբերդի բնակչութեան զգալի աճումը դպրոցի մը կառուցման անհրաժեշտութիւնը կը շեշտէ, եւ նկատելով որ Նոր Խարբերդի մէջ դպրոցի մը շինութեան համար կտակուած 10,000 տոլարը տակաւին անդործածելի կը մնայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան քով, Համա-Խարբերդցիական Միութեան 5-րդ Պատգամաւորական Ժողովը գումարուած Պոսթոնի մէջ՝ Մարտ 20, 1932, իրաւասութիւն կուտայ նորընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինին որ իրեն յարմար տեսած եղանակաւ ու միջոցներով հետապնդէ այս խնդիրը: Հակառակ պարագային՝ երբ երեք ամիսէն դրական եւ որոշ պատասխան մը չստանայ Հ. Բ. Ը. Միութեանէն, դիմէ աւելի կարճ եւ կտրուկ միջոցներու»:

Որոշուեցաւ որ այս բանաձեւէն մէյմէկ օրինակ ղրկուի Բարիդի Կեդրոնական Վարչութեան եւ Ամերիկայի Շրջանային Յանձնաժողովին:

3.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ 1932-1933 ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի ներկայացուցիչներու ծրագիրն էր հետեւեալը.—

Ա.— Երեք մեծ յարկարաժիներ եւս չինել:

Բ.— Ընդարձակ հողեր մշակել:

Գ.— Խողովակներով խմելու ջուր բերել:

Դ.— Օթօժօպիլ նորոգելու կայան մը հաստատել:

Ե.— Հաւաքածարան մը հիմնել:

Պիւտճէի Յանձնախումբը ներկայացուց իր տեղեկագիրը: Մանրակրկիտ քննութիւններէ վերջ՝ Յանձնախումբը տեղեկագրեց որ շինարարական այս հսկայ գործը յաջողութիւն մը ընելու համար առ նուազն \$15,000-ի պէտքը կար:

Հետեւապէս Պատգամաւորական Ժողովը վաւերացուց 15,000 տոլարի նուազագոյն պիւտճէն այս շրջանին համար:

Թէ մասնաճիւղերու եւ թէ կեդրոնի ջանքը պիտի ըլլար ամէն կարելի միջոցներ գործածել այս գումարը ապահովելու համար:

4.— ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԵՒ ՀԱՇՈՒԵՑՈՑԻ ՎԱԽԵՐԱՑՈՒՄ

Հաշուեքննիչ Յանձնախումբը յայտարարեց որ գանձապահին հաշիւները կատարելապէս ճիշդ գտած եւ վաւերացուցած էր:

Իսկ տարեկան տեղեկագիրը որ նախորդ նիստին մէջ կարգացուած էր՝ Պատգամաւորական Ժողովը գոհացուցիչ գտնելով վաւերացուց եւ յայտնեց իր գնահատութիւնը թափուած աշխատանքներուն համար:

5.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

Ընտրական Յանձնախումբը ներկայացուց ընտրելիներու երկպառակ ցանկ մը, որմէ ընտրուեցան հետեւեալները.—

Յարութիւն Խօլլիկեան, Յարէթ Մ. Փիլիպպոսեան, Տօք Յ. Ծովիկեան, Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, Մաղաք Պէրպէրեան, Եղիա Գլիբեան, Տիգրան Էքմէքճեան, Կարապետ Ղազարոսեան, Յարութիւն Սողիկեան:

Յաջորդ առաւելագոյն քուէ առնողներն էին Սարգիս Կօշկարեան, Յովհաննէս Նահիկեան, Յովսէփ Գրիգորեան:

Այս առթիւ Պատգամաւորական Ժողովը իր ցաւակցութիւնը յայտնեց գանձապահին, Սարգիս Կօշկարեանի, հիւանդութեան համար, եւ նկատի ունենալով յիշեալին անձնուէր ծառայութիւնը անցեալ տարիներուն մէջ իբրեւ գանձապահ Միութեան, միաձայնութեամբ նշանակեց դայն իբրեւ Պատուոյ Անդամ Կեդրոնական Գործադիր Մարմինի:

6.— ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Որոշուեցաւ գնահատում եւ շնորհակալութիւն մատուցանել հետեւեալ մարմիններուն եւ անձանց.—

1.— Խ. Հայաստանի կառավարութեան:

2.— Խ. Հայաստանի ներկայացուցիչներուն:

3.— Կեդրոնական Գործադիր Մարմինին:

4.— Քարտուղարութեան:

5.— Գանձապահին:

6.— Պատուոյ Անդամ Միսաք Մաղմանեանի:

Հինգերորդ Պատգամաւորական Ժողովը վերջացաւ գիշերուան ժամը 9:30-ին:

Ատեմադպիր
ՄԻՀՐԱՆ ԿՕՇԿԱՐԵԱՆ

Ատեմապետ
ՄԱՀԱՔ Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Այս հարցի մասին շատ լուրջ դիտողութիւններ եղան, իմանալով որ երեք տարիներու բանակցութիւնները տակաւին դործնական ելքի մը յանգած չէին:

Հետեւեալ բանաձեւը միաձայնութեամբ ընդունուեցաւ.—

«Նկատելով որ Նոր Խարբերդի բնակչութեան զգալի աճումը դպրոցի մը կառուցման անհրաժեշտութիւնը կը չենք, եւ նկատելով որ Նոր Խարբերդի մէջ դպրոցի մը շինութեան համար կտակուած 10,000 տոլարը տակաւին անդործածելի կը մնայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան քով, Համա-Խարբերդցիական Միութեան 5-րդ Պատգամաւորական Ժողովը գումարուած Պոսթոնի մէջ՝ Մարտ 20, 1932, իրաւասութիւն կուտայ նորընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինին որ իրեն յարմար տեսած եղանակաւ ու միջոցներով հետապնդէ այս խնդիրը: Հակառակ պարագային՝ երբ երեք ամիսէն դրական եւ որոշ պատասխան մը չստանայ Հ. Բ. Ը. Միութենէն, դիմէ աւելի կարճ եւ կտրուկ միջոցներու»:

Որոշուեցաւ որ այս բանաձեւէն մէյմէկ օրինակ զրկուի Բարդի Կեդրոնական Վարչութեան եւ Ամերիկայի Շրջանային Յանձնաժողովին:

3.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ 1932-1933 ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի ներկայացուցիչներու ծրագիրն էր հետեւեալը.—

Ա.— Երեք մեծ յարկարաժիններ եւս չինել:

Բ.— Ընդարձակ հողեր մշակել:

Գ.— Խողովակներով խմելու ջուր բերել:

Դ.— Օթմօսլի նորոգելու կայան մը հաստատել:

Ե.— Հաւարածարան մը հիմնել:

Պիւտճէի Յանձնախումբը ներկայացուց իր տեղեկագիրը: Մանրակրկիտ քննութիւններէ վերջ՝ Յանձնախումբը տեղեկագրեց որ շինարարական այս հսկայ գործը յաջողութիւն մը ընելու համար առ նուազն \$15,000-ի պէտքը կար:

Հետեւապէս Պատգամաւորական Ժողովը վաւերացուց 15,000 տոլարի նուազագոյն պիւտճէն այս շրջանին համար:

Թէ մասնաճիւղերու եւ թէ կեդրոնի ջանքը պիտի ըլլար ամէն կարելի միջոցներ գործածել այս գումարը ապահովելու համար:

4.— ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԵՒ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԻ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ

Հաշուեքներէ Յանձնախումբը յայտարարեց որ գանձապահին հաշիւները կատարելապէս ճիշդ գտած եւ վաւերացուցած էր:

Իսկ տարեկան տեղեկագիրը որ նախորդ նիստին մէջ կարգացուած էր՝ Պատգամաւորական Ժողովը գոհացուցիչ գտնելով վաւերացուց եւ յայտնեց իր ղեւհատութիւնը թափուած աշխատանքներուն համար:

5.— ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

Ընտրական Յանձնախումբը ներկայացուց ընտրելիներու երկպատիկ ցանկ մը, որմէ ընտրուեցան հետեւեալները.—

Յարութիւն Խօլիկեան, Յարէթ Մ. Փիլիպպոսեան, Տօբ. Յ. Մովսիսեան, Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, Մաղաք Պէրպէրեան, Եղիա Գլիբեան, Տիգրան Էմէքճեան, Կարապետ Ղազարոսեան, Յարութիւն Սողիկեան:

Յաջորդ առաւելագոյն քուէ առնողներն էին Սարգիս Կօշկարեան, Յովհաննէս Նահիկեան, Յովսէփ Գրիգորեան:

Այս առթիւ Պատգամաւորական Ժողովը իր ցաւակցութիւնը յայտնեց գանձապահին, Սարգիս Կօշկարեանի, հիւանդութեան համար, եւ նկատի ունենալով յիշեալին անձնուէր ծառայութիւնը անցեալ տարիներուն մէջ իբրեւ գանձապահ Միութեան, միաձայնութեամբ նշանակեց զայն իբրեւ Պատուոյ Անդամ Կեդրոնական Գործադիր Մարմինի:

6.— ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Որոշուեցաւ ղեւհատում եւ շնորհակալութիւն մատուցանել հետեւեալ մարմիններուն եւ անձանց.—

1.— Խ. Հայաստանի կառավարութեան:

2.— Խ. Հայաստանի ներկայացուցիչներուն:

3.— Կեդրոնական Գործադիր Մարմինին:

4.— Քարտուղարութեան:

5.— Գանձապահին:

6.— Պատուոյ Անդամ Միսաք Մաղմանեանի:

Հինգերորդ Պատգամաւորական Ժողովը վերջացաւ գիշերուան ժամը 9.30-ին:

Ատեմաղպիր
ՄԻՀՐԱՆ ԿՕՇԿԱՐԵԱՆ

Ատեմաղպետ
ՄԱՂԱՔ Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

**ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆԻ**

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԳՈՒՄԱՐԵԱՅ ՄԱՐՏ 20, 1932, ՊԵՐՏՈՒՄ**

Պատուարժան Պատգամաւորներ Համա-Պարբերդցիական
Միութեան Հինգերորդ Պատգամաւորական Ժողովի,
Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամները որ վարե-
ցին Միութեան գործերը Մարտ 16, 1931-էն մինչեւ Մարտ
20, 1932, հետեւեալներն էին. —

Տօք. Յովհաննէս Ծովիկեան, Ատենայեւ
Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, Փոխ-ատենապետ
Յարէթ Մ. Փիլիպպոսեան, Ատենադպիր
Սարգիս Կօչկարեան, Գանձապահ
Տիգրան Էքմալճեան, Հաշուակալ
Յովհաննէս Նահիկեան, Խորհրդական
Եղիա Գլիրեան, Խորհրդական
Յարութիւն Պօլլիկեան, Խորհրդական
Կարապետ Ղազարոսեան, Խորհրդական:

1.— ԺՈՂՈՎՆԵՐ

Կեդրոնական Գործադիր Մարմինը տարուան մը ընթացքին
ունեցած է 11 նիստեր, ուր ի միջի այլոց առանց բացառու-
թեան խոստովանեցան և քարտուղարին և գանձապահին հաշիւները:

Սոյն ժողովներուն հրաւիրուած են նաեւ Օսանդակող Ըն-
կերութիւններու ներկայացուցիչները խորհրդականի հանդա-
մանքով, ըստ նախորդ Պատգամաւորական Ժողովի որոշման:
Ասոնցմէ մին միայն մէկ անգամ կարող եղած է ներկայ գտնու-
ել նիստերէն միոյն:

**2.— ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ, ԽԱՌՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՄԸ ԵՒ
ՕԺԱՆԴԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Մեր արձանագրութեանց մէջ ունինք 12 մասնաճիւղերու,
մէկ խառն յանձնախումբի և 7 օսանդակող ընկերութիւննե-
րու անունները, որոնք իրենք կադմակերպեալ մարմիններ կը
գտնուին այլեւայլ քաղաքներու մէջ և օգնած են պարբերաբար
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ հսկայ ձեռնարկին:

Մասնաճիւղեր կան Պոսթոնի, Ռուստրի, Լինի, Նիւ Եօր-
քի, Հարթֆըլտի, Հէյլլըքսի, Լօվէլի, Տիթթոյթի, Շիքա-
կոյի, Լօղ Էնճէլլսի և Ֆրէզնօյի մէջ: Կը ցաւինք որ այս մաս-
նաճիւղերէն ոմանք բոլորովին անտարբեր մնացին: Մինչ իսկ
զլացան երկտող մը գրել բացատրելու իրենց դժուարութիւն-
ները: Սակայն հակառակ անոնց լուռ մնալուն՝ Կեդրոնա բնաւ

անխոյժ գտնուած է անոնց հետ յարաբերութեան մտնելու:
Անխոյժ նամակներ և շրջաբերականներ ղրկուած են ամէնուն
ալ զանոնք դիտակ պահելու Միութեանս բոլոր ջանքերուն և
ձեռնարկներուն:

Փրավիտէնսի մէջ ունինք խառն Յանձնախումբ մը, կադմը-
ւած Պարբերդի Կրթասիրացէն, Քեսիրիկի Ընդհանուր Միու-
թենէն և Հիւսէյնիկի Վերաշինացէն: Այս Յանձնախումբը մեծ
ծառայութիւն մատուցեց Միութեանս, կադմակերպելով հաղա-
բաւոր Պարբերդցիներու մեծ դաշտահանդէսը Փրավիտէնսի
մէջ:

Իսկ Օսանդակող Ընկերութիւններու ցանկը այս տարի
բարձրացաւ երկու նոր ընկերութիւններու յաւելումովը: Ներ-
կայի ցանկը հետեւեալն է. —

- 1.— Պարբերդի Կրթասիրաց
- 2.— Իջմէի Միացեալ Ընկերութիւն
- 3.— Հիւսէյնիկի Վերաշինաց
- 4.— Քեսիրիկի Ընդհանուր Միութիւն
- 5.— Հողէի Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութիւն
- 6.— Մեծկերտի Ընկերութիւն
- 7.— Խուլադիլի Ս. Դ. Հնչ. Յարէթ-Յակոբ Գրադարանի
Միութիւն:

Իսկ Նիւ Եօրքի մէջ ունինք Երիտասարդաց Հատուած մը
որ ցարդ ունեցած է երկու պարահանդէս ի նպաստ ՆՈՐ ԽԱՐ-
ԲԵՐԴԻ:

3.— ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Այս շրջանիս մէջ եղած չեն անհատական դիմումներ: Յա-
ւէտ ոյժ տրուած է ընդհանրական ձեռնարկներու: Հինգ տար-
բեր տեղերու մէջ դաշտահանդէսներ տեղի ունեցած են: Պոս-
թոնի մէջ՝ զուտ հասոյթ \$847.06, Փրավիտէնսի խառն Յանձ-
նախումբի նախաձեռնութեամբ՝ զուտ հասոյթ \$535.63, Հարթ-
ֆըլտի մէջ՝ զուտ եկամուտ \$71.50, Ռուստրի մէջ՝ զուտ շահ
\$147.64: Լօղ Էնճէլլսի մէջ՝ ընկերակցութեամբ Արաբիկի
և Սերաստիոյ Միութեանց՝ հասոյթ անորոշ: Լօղ Էնճէլլսի
Մասնաճիւղը այս տարի նաեւ առաջին անգամ շահեցաւ իր-
րեւ լաւ կադմակերպեալ և գործօն մասնաճիւղ և ունեցաւ
չորս հրապարակային ձեռնարկներ:

Իսկ Պոսթոնի Մասնաճիւղը ունեցաւ նաեւ Ուօշինկթընի
ծննդեան օրուան մեծ հանդէսը՝ զուտ հասոյթ 200 տոլար:

Պարբերդի Կրթասիրացը իր տարեկան եկամուտին կէսը
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ չինութեան նուիրեց՝ քուէարկուած որոշման
մը համաձայն: Այս տարուան նուէրն էր 194.35 տոլար:

Կեդրոնիս կողմէն սակայն ջանք մը եղաւ ընդհանրական
ձեռնարկ մը ընել ամբողջ Ամերիկայի Պարբերդցիներուն հա-
մար:

Տարեկան երկու տոլարի կամաւոր տուրք մը հաստատեց եւ յայտարարեց թերթերու մէջ, այն ակնկալութեամբ որ նախանձախնդիր խարբերողներու համար խիստ գործնական միջոց մ'էր մեղի օգնութեան հասնելու: Գումարը բաղդատմամբ հսկայ գործին շատ չնչին էր թէպէտ, բայց ցաւ ի ուրա հը յայտարարենք որ մէկ տեղէ դատ այս առաջարկը արձագանդ չգտաւ: Միայն Պոսթոնի մէջ էր որ Կեդրոնիս կարգադրութեամբ Ղուկաս Արոյեանը կարող եղաւ Պոսթոնի եւ շրջակայքի խարբերողներէն դանձել շուրջ 100 տոլար:

Քանի քանի անդամներ դանդատներ կամ դիտողութիւններ եղած են ըսելով թէ ինչո՞ւ տարեկան տուրք մը չառնուիր խարբերողներէ: Ըսելը շատ դիւրին է, գործնականացնելը շատ դժուար, երբ աշխատողներ կը պահանջեն: Մեր անխախտ համոզումն է որ եթէ մասնաճիւղեր այս ուղղութեամբ լուրջ ջանքեր ընէին, բաւական թիւ բարեկեցիկ խարբերողներէ կարող պիտի ըլլային այս ճղճիմ գումարը դանձել:

4.- ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ մասին ծանօթութիւններ, Հայաստանէն եկած նամակներ, նկարներ եւ յօդուածներ, բաց նամակներ եւ ծանուցումներ աւելի երեւցան այս շրջանիս մէջ թերթերու եւ պարբերաթերթերու մէջ քան նախորդ շրջաններուն մէջ, պարզ այն պատճառաւ որ առատ նիւթ ունէինք եւ դանդաղ օդատարածեցինք յարմար ատենին, առանց որեւէ ծախքի ենթարկելու Միութիւնը:

Անցեալ տարին երբ Կեդրոնս ստիպուած էր տարեկան թիւ 1 պատկերազարդ գրքոյկը երեւան հանել եւ ցրուել, ծախք ունեցաւ 144 տոլար, 2000 օրինակի համար: Այս տարուան թիւ 2 տարեգիրքը բոլորովին ձրի հրապարակ դրուեցաւ՝ չնորհիւ Պոսթոնի Մասնաճիւղի աջակցութեան: Անոնք Ուօլինկթընի ծննդեան օրուան փրօկրամին հետ տպեցին թիւ 2 Տարեգիրքը, 1000 օրինակ, եւ ցրուեցին ժողովուրդին՝ խնայելով մեծկակ գումար մը:

Բարեբախտաբար Պայքարի մէջ երեւցած յօդուածաչափը նաեւ՝ գրուած Յովհաննէս Պօղոսեանի ձեռամբ, «Վերաշինուող Հայքնիք» վերնագրով՝ կուգար աւելի լոյս արոել ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ հսկայ ձեռնարկին:

Այսօր եւ ոչ մէկ խարբերող կը յուսանք անտեղեակ է ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ մասին:

3.- ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ

ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ ունի ներկայիս 6 մեծկակ չէնքեր արդիական կազմուածքներով, որոնք հաւասար են 60 դատ տուներու: Այդ չէնքերուն մէջ պիտի կրնան ապրիլ 250 անձինք:

Վերջնագոյն լուրերուն նայելով՝ այսօր Նոր Խարբերող մէջ կ'ապրին առաւել քան 150 անձինք:

Մեր ներկայացուցիչները կը գրեն որ բնակչութիւնը այնքան մեծցած է որ մանուկներու վրթութեան համար դպրոցի մը կառուցումը օրուան էն կարեւոր հարցն է:

Կեդրոնս ամէն կարելի ջորաւոր միջոցներ գործածած է դպրոցի մը համար կտակուած գումարը, 10,000 տոլար, առաւել կամ նուազ, նպատակին ծառայեցնելու համար: Ոչ ոք դիտէ տակաւին որոշակի թէ գումարը որքան է: Ինչ որ վերտենք եզրկտական թերթէ մը առած ենք: Ցարդ Բարեգործականը իբրեւ կտակակատար հաճած չէ մեղ յայտնել իսկական գումարը, հակառակ որ քանիցս անոնցմէ խնդրած ենք այդ տեղեկութիւնը: Երեք տարիէն աւելի է որ բանակցութեան մէջ եղած ենք Բարեգործականի հետ:

Կեդրոնիս կողմէն գրուած վերջին նամակը Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովին եւ անոնց միջոցաւ Բարիլի Կեդրոնին անպատասխանի պիտի չմնայ՝ վստահելի աղբիւրներէ ստացուած տեղեկութեանց համաձայն:

Այս առկախ մնացած խնդիրը իր բանաւոր լուծումը պիտի ստանայ անպայման, որովհետեւ խարբերողներու պահանջը արդարացի է ամէն տեսակէտիւ:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ աւելի տուններ ունեցած պիտի ըլլար, եթէ նպատատար պայմաններ ունենայինք: Նախ, չունեցանք այս անցեալ շրջանին բաւականաչափ կանխիկ դրամ, երկրորդ՝ առատ շինանիւթեր, եւ երրորդ՝ աշխատաւորներ չէնքերու կառուցման համար:

Հակառակ այս աննպաստ պայմաններուն, սակայն, ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ կառուցումը յառաջ տարուած է յարատեւ, թէպէտ դանդաղ:

6.- ՆՈՒԷՐՆԵՐ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ուրախ ենք որ խարբերող Գաւառի Ուսումնասիրացները մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին այս անցեալ տարին: Ոմանք ինքնաբերաբար ուղեցին ընդարձակ տեղեկութիւններ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՒ մասին: Կեդրոնս սիրալոյսով դրկեց անոնց պէտք եղած բացատրութիւնները եւ տեղեկութիւնները:

Բէյսին, Ուիսքոնսինի մէջ՝ կազմուած Խուրդիւղի Ս. Գ. Հնչակեան Յարթ-Յակոբ Գրադարանի Միութիւնը ինքնաբերաբար նուիրեց իր դանձին ամբողջ գումարը, \$346.48:

Լովէլի մէջ կազմուած Մեծկերտի Ընկերութիւնը որոշեց նուիրել 1200 տոլար, որուն 600 տոլարը արդէն ստացած ենք, եւ փոխանցած Հայաստան:

Հողէի Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութեան խոստացած երկրորդ 1200 տոլարը, քուէարկուած կանոնաւոր եւ բա-

ցառիկ երկու պատգամաւորական ժողովներու մէջ, տակաւին ստացած չենք: Յոյս ունինք որ այդ գումարը եւս պիտի ստանանք ի մօտոյ:

7.- ԳԱՆՁԻՆ ՎԻՃԱԿԸ

Մինչեւ հիմա Խ. Հայաստան ղրկած ենք \$29,844.09, ապրանքի ձեւին տակ կամ կանխիկ դրամ: Իսկ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ համար ցարդ ծախսուած է 180,000 բուպլի:

Այս շրջանին մէջ ապրանք ղրկած ենք \$2774.34-ի արժողութեամբ, որոնք ապահով հասած են մեր ներկայացուցիչներուն ձեռքը: Իսկ ունինք տակաւին ուրիշ ապսպրանքներ որ կարող եղած չենք լեցնել դանձին մէջ բաւականաչափ դրամ չունենալնու պատճառաւ: Այս կը նշանակէ մեզի համար դժբախտական մեծ կորուստ:

Չարխթառուն Թրքթ Գըմբընիի մէջ ունէինք \$440.22 որ կապուած մնացած է:

Գանձապահին հաշուեցուցակէն յայտնի է որ Միութիւնս այսօր կանխիկ կամ կապուած ունի միայն 628.15 տուար:

Ակներեւ է որ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինարարութիւնը այս անշան գումարովը յառաջ տանիլ անկարելի է:

Պատուարժան պատգամաւորներ այս պարագան ի մտի ունենալով կը յուսանք որ միջոցներ պիտի գտնեն դանձը պարտացնելու, որպէս զի սկսուած հսկայ գործը անսպթաք յառաջ տարուի, Խարբերդ Գաւառի պատիւը եւ վարկը բարձր բռնելով:

8.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Նախորդ Պատգամաւորական ժողովը երեք որոշումներ քուէարկեց, որոնց գործադրումը յանձնեց նորընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինի:

ՆԱԽ, կազմել Երիտասարդաց եւ Կանանց Օժանդակ Մարմիններ:

Որեւէ լուրջ աշխատանք թափուած չէ այս որոշումը գործադրելու համար: Միայն Պոսթոնի մէջ Երիտասարդաց Օժանդակ Մարմին մը կազմելու խորհրդակցութիւնները եղած են, եւ ի մօտոյ կարելի պիտի ըլլայ զայն կազմել:

Երկրորդ, որոշուեցաւ Միութեան ծախքերը կրճատել կարելի եղած չափով եւ եղանակաւ: Քարտուղարին մասնակի գործ յանձնելով Միութիւնս խնայեց 1040 տուար: Անոր իրաւունք տրուեցաւ իր տպագրական գործերը չարունակել եւ ընել միայն քարտուղարութեան յատուկ գործերը: Սակայն պարտաւոր կը դգանք յայտարարել որ նա անտրտունը կատարած է նաեւ այնպիսի գործեր որոնք իրմէ չէին պահանջուեր՝ ըստ կանխորոշ հասկացողութեան:

ԵՐՐՈՐԴ, Խարբերդցիները մարդահամարը պաշտաստել: Այս գործը այնքան աշխատանք եւ ծախք կը պահանջէր որ անկարելի եղաւ զայն ձեռք առնել եւ յառաջ տանիլ:

9.- ՆԵՐԳԱՎԹԻ ՀԱՐՑԸ

Ներգաղթի գործը բոլորովին տարբեր երեւոյթ մը ստացաւ վերջերս, ինչպէս որ ամէնուրեք ալ ծանօթ է:

Կեդրոնս ներգաղթի գործը փութացնելու համար հարցարաններ տպած եւ ցրուած էր այլեւայլ կեդրոններու մէջ: Մեր ներկայացուցիչները արդէն արտօնութիւն ստացած էին Հայկական կառավարութենէն 250 Խարբերդցիներու մուտքին համար: Այդ հարցարաններէն ոմանք լեցուած ղրկեցինք Խ. Հայաստան, եւ կ'ակնկալէինք անոնց պատասխանները ստանալ, երբ յանկարծ բարեբախտաբար երեւան եկաւ մեծ ծաւալով եւ որով ծրագրով եւ պայմաններով հաղարաւոր գաղթականներու մուտքը Հայաստան: Մեր անջատ աշխատանքները կուլ տրուեցան այդ մեծածաւալ փրօկրամին մէջ: Արդէն հաւաստի արբիւրներէ լուր ստացած ենք որ առաջին կարաւանին մէջ կը գտնուէին Խարբերդցիներ, որոնք Հայաստան հասնելով իրենց բնակութիւնը ըրած են ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ:

Կը յուսանք որ յաջորդաբար ուրիշները պիտի հասնին եւ հաստատուին հոն, պայմանաւ որ Միութիւնս կարող ըլլայ անոնց հալթալթել բաւականաչափ բնակարաններ:

Գրած ենք մեր ներկայացուցիչներուն որ ղրկեն մեզ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ բնակիչներուն անուանացանկը, — անուն, ծննդավայր, տարիք եւայլն, բոլոր մանրամասնութիւններով: Երբ այդ անուանացանկը ստանանք, պիտի հրատարակենք Թերթերու մէջ առ ի գիտութիւն բոլոր Խարբերդցիներու:

10.- 1932—1933-Ի ԾՐԱԳԻՐԸ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մեր ներկայացուցիչները կը գրեն որ 1932—1933 շրջանի ծրագիրն է. —

ա. — Ծինել երեք մեծ յարկարաժիններ նախորդներուն նըման:

բ. — Ծինել հաւարուծարան մը արդիական սարքաւորումներով իբրեւ եկամուտի աղբիւր:

գ. — Թէգէգիւղէ խմելու ջուր բերել խողովակներով:

դ. — Հերկել եւ ցանել աւելի ընդարձակ հողեր:

ե. — Հաստատել օթոմօպիլ նորոգելու կայարան մը իբրեւ ճարտարարուեստի մէկ ճիւղ:

Նոր Խարբերդի կեդրոնական դիրքը շրջակայ գիւղերու եւ քաղաքներու մէջ շատ նպաստաւոր պայմաններ կը ստեղծէ այնպիսի ձեռնարկի մը յաջողութեան համար:

Այս բաղմակողմանի շինարարական գործերու ընթացք տալու համար անհրաժեշտ է որ Միութիւնս ապահովէ ներկայ շրջանիս մէջ աչքառու մեծակալ գումարներ: Ներկայ Պատգամաւորական ժողովի էն կենսական հարցը պէտք է ըլլայ ի՞նչ պէս եւ ո՞ր տեղերէն ստանալու է բաւականաչափ զբամ, հա- կառակ պարագային այս կանխամտածեալ ծրագրեր կարելի չէ իրագործել:

1932-1933 շրջանի մէջ անոնք նաեւ կը փափաքին կառուց- ուած տեսնել վարժարան մը, որուն ծախուց համար 10,000 տոլար կտակուած է հանդուցեալ Մկրտիչ Հաճի Յովհաննէս- եանի կողմէ: Սոյն գումարը կը մնայ Հայկական Բարեգործա- կան Ընդհանուր Միութեան գանձին մէջ, ինչպէս վերեւ յիշե- ցինք:

11. ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդ ի՞նչ են Կեդրոնիս թելագրութիւնները:

ՆԱԽ, բոլոր մասնաճիւղեր եւ ուրիշ համակիր կաղմակեր- պութիւններ արձագանգ տալու են Կեդրոնիս կողմէն յղացուած որեւէ առաջարկի եւ ծրագրի:

«Տեղական պայմանները չեն ներքը» ըսելով խնդիրը մէկ կողմ դնելը արդարացի չէ: Գործադրել ջանալու է առանց ար- գիւնքին վրայ կասկածներ յարուցանելու: Ինչ որ կ'ընեն ու- րիշ կաղմակերպութիւններ, նոյնը ընելու են Համա-Խարբերո- ցիականներ: Մենք վստահ ենք որ որեւէ անկեղծ եւ լուրջ աչ- խատանք ապարդիւն չի մնար: Պարզ խօսքով՝ մասնաճիւղեր ըջօրէն գործի լծուելու են:

ԵՐԿՐՈՐԴ, քանի որ երեւութապէս եւ իրականապէս ժո- ղովուրդին գրպանները պարպուած են, եւ մենք չենք կարող պարապ գրպաններէ կանանչ տոլարներ հոսեցնել, գիմելու ենք Ուսումնասիրացներու եւ խնդրելու ենք անոնցմէ որ հա- ճին իրենց պատրաստի զբամներէն մաս առ մաս նուիրել ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինութեան: Չենք կարծեր որ այդ զբամները ա- ւելի օգտակար կերպով գործածած պիտի ըլլային եւ աւելի մնայուն եւ յիշատակիլի արդիւնք մը ապահոված պիտի ըլլա- յին քան որ եթէ յատկացնէին ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ, որով հայթա- թած պիտի ըլլային գաղթական Խարբերոցիներու բնակարան եւ ապրուստի միջոցներ:

Կարծենք որ օրը եկած է այդ ուղղութեամբ աւելի լուրջ եւ յարատեւ աշխատանք մը ընելու: Վստահ ենք որ անոնք ար- ձագանգ պիտի տան այսօր քան երբեք:

ԵՐՐՈՐԴ, աշխատիլ ամէն տեղ փոխան ծաղկեպսակի նը- լիրատուութիւններ ստանալ ի յարգանս Խարբերոցի նշնեց- եալներու:

Յաւով կը դիտենք որ վերջերս այդ ուղղութեամբ թափ- ուած աշխատանքները անօգուտ եղած են տարբեր բարձրանե- բու կողմէ եղած խաչաձեւումներուն պատճառաւ:

Ո՞ր Խարբերոցին է որ պիտի չուզէր իր նշնեցեալ սիրե- լիին անունը յաւերժացնել՝ արձանադրել տալով անոր անունը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ Ոսկեմատեան: Յիշատակարանի բաժնին մէջ: Այս Ոսկեմատեանը մօտաւոր ապագային պիտի փոխադրուի ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ հասարակաց Մատենադարանը, ուր Խար- բերոցիներ յաճախ պատահութիւն պիտի ունենան զայն աչքէ անցունելու եւ թերեւս գտնելու իրենց աղգականներուն եւ բա- րեկամներուն անունները անոր մէջ արձանադրուած:

Եթէ Խարբերոցիներ ուզեն կրնան այս բարենպաստակ սո- վորութեան օգտուիլ եւ օգնել ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինութեան գործնական եղանակաւ մը:

Ուրիշ օգտակար թելագրութիւններ անշուշտ պիտի ըլլան Պատգամաւորական ժողովից կողմէն: Կը հաւատանք որ Պատ- ուարժան Պատգամաւորներ հետեւին քերած են շատ մը օգ- տակար եւ գործնական առաջարկներ եւ ծրագրեր ՆՈՐ ԽԱՐ- ԲԵՐԴԻ մասին: Այդպիսի թելագրութիւններու պէտքը այսօր աւելի զգալի է քան երբեք, քանի որ տնտեսական պայմանները խիստ աննպաստ են մեր ուսերուն վրայ ծանրացած հսկայ գոր- ծը մեծ յաջողութեամբ մը յառաջ մղելու համար:

Ակներեւ է որ իբրեւ նախանձախնդիր Խարբերոցիներ այս գործը երբեք պիտի չլքենք: Մեր վարկը եւ պատիւը այդ կը պահանջէ:

Արդ այս պատեհ առթիւ կը յայտնենք մեր խորին չնոր- հակալութիւնը բոլոր այն անհատներուն եւ մասնաճիւղերուն, նուիրատու եւ օժանդակող ընկերութիւններուն, որոնք իրենց նուէրներովը եւ բարոյական քաջաբերութեամբը չափով մը դիւրացուցին մեր գործը:


Խ. Հայաստանի կառավարութեան եւ մեր ներկայացուցիչ- ներուն նաեւ կը յայտնենք մեր երախտագիտական անկեղծ ըզ- դացումները: Անոնց բարեացակամութեան եւ անձնուէր զոհո- ղութիւններուն շատ բան կը պարտինք:

Մաղթելով յաջողութիւն ներկայ Պատգամաւորական Ժո- ղովից, յարգանքներով՝

Ի դիմաց Համա-Խարբերոցիական Միութեան
Կեդրոնական Գործադիր Մարմինի

Ատեմաղպիր
ՅԱԲԷԹ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Ատեմաղպետ
ՏՕԲ. Յ. ՄՈՎԻԿԵԱՆ





ՀԱՐՔԵՐԴԻ

Համար ցարդ ծախ-
սըւած է 180,000
բուլլիւ Շինուած
են 60 բնտանիքի
բաւարար տուննէր :

Շնորհակալութեամբ կ'ընդունուին

1. Նուէրներ անհատներէ
2. Ուսումնասիրաց Ընկերութիւններէ
3. Կտակներ եւ ապահովադրութիւններ
4. Փոխան ծաղկեպսակի նուիրատուու-
թիւններ

Եւ օրը օրին կ'արձանագրուին

ՈՍԿԵՄԱՏԵԱՆԻ մնայուն էջերուն վրայ

GENERAL UNION OF HARPOOT

463 Park Sq. Bldg. Boston, Mass.

Handwritten signature